Արձանագրություն N 2

Երևան քաղաքի փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

29.01.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին, 2020 թվականի հունվարի 29-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Երևան քաղաքի փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ					
Մասնակցի անվանումը	Նախատեսված ֆինանսական միջոցը	Առաջարկած գինը			
		Ինքնարժեքը	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ	1,833,200	1,800,000	1,500,000	660,000	3,960,000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Ա. Կիրակոսյան)

5.1 Հաշվի առնելով, որ սույն ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն, ինչպես նաև մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները՝ ընտրված մասնակցին որոշելու նպատակով կանցկացվի գների նվազեցման բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

5.2 Գների նվազեցման բանակցությունները կկայանան 03.02.2020 թվականին ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 03.02.2020 թվականին ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ..... Ա. Հարությունյան

..... Ա. Սարգսյան

..... Կ. Հարությունյան

..... Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան